

# Վարժեցնող» Օսին

## հեղինակ՝ Լիլո Հարդել

### թարգմանիչ՝ Ս. Վարդանյան

Այս դեպքը տեղի ունեցավ մեր դպրոցում կազմակերպված ծնողական երեկոյի ժամանակ: Օսին ու նրա Լիլո հավր այնպիսի աղմկալից հաջողություն ունեցան, որ ամբողջ քաղաքը երեք օր միայն այդ մասին էր խոսում:

Օսին այդ հավր մի քանի տարի առաջ նվեր էր ստացել իր ծննդյան օրը: Նրանց ընտանիքում մեծ շուքով էին նշում ծննդյան տոները: Վեց հոգուց էր բաղկացած այդ ընտանիքը՝ հայրը, մայրը և չորս որդիները: Չորսն էլ մեր դպրոցում էին սովորում: Օսին ամենամեծն էր:

— Վերջին հաստիկի հերթն էլ հասավ, — ասաց Օսին, երբ նրա կրտսեր եղբայրը հսկայական պայուսակը ձեռքին ոտք դրեց դպրոցի բակը:

Իր եղբայրներին Օսին հաստիկ էր անվանում:

— Այ հիմա արդեն լրիվ կազմով ենք, — հպարտությամբ հայտնեց նա ֆրաու Վիլաուին՝ մեր դասուհին:

Այդ պարագան դժվար թե ուրախացներ ուսուցիչներին ու դիրեկտորին, որովհետև չորս եղբայրն էլ արտակարգ կենսուրախ ու ժիր տղաներ էին:

Բայց ավելի լավ է չշեղվեմ ու պատմեմ, թե ինչպես Օսին հավ ունեցավ: Այսինքն՝ այն ժամանակ իսկի հավ էլ չէր, այլ պստիկ մի ճուտիկ էր: Եվ ոչ ոք էլ մտադիր չէր ընծայել Օսին: Ըստ մտահոգման, ճուտիկը պիտի կատարեր թռչնային բակի կողմից ընտրված պատվիրակի դեր ու վաղ առավոտյան շնորհավորեր Օսին իր տասնամյակի առթիվ: Ողջ ընտանիքը, բացի հորեյարից, այդ օրը սովորականից վաղ էր արթնացել, և մայրը երեք որդիների հետ միասին տոնական նախաճաշի սեղանն էր պատրաստում: Նրանք վառեցին բոլոր լույսերն ու Օսիի ափսեն զարդարեցին ծաղիկներով:

Երբ անվանակոչիկը նոր սպիտակ վերնաշապիկով ու միջոնեկ «հաստիկի» փայլեցրած կոշիկները հագին սենյակ մտավ, ծնողներն ու եղբայրները արդեն հանդիսավոր սպասման մեջ էին:

Մեծ եղբոր կողքին նստած էր Գիլկուշ շունը, միջնեկը գրկել էր դեղին կատվին, իսկ կրտսեր «հաստիկի» ափի վրայից հորեյարին էր նայում փոփոլավոր ճուտիկը:

Հայրը մի կարճ ճառ արտասանեց:

— Բոլոր ծննդյան օրերն էլ տոն են, — ասաց նա: — Սակայն այսօրվա տոնը յուրահատուկ է. լրանում է մեր Օսիի տասը տարին: Դա մարդու կյանքում կարևոր տարեդարձ է:

Օսին մի քիչ շփոթվեց, որովհետև սովոր չէր ուշադրության կենտրոնում լինել: Ընտանիքի բոլոր անդամները սեղմեցին անվանակոչիկի ձեռքը, իսկ Գիլկուշը թաթը տվեց: Բայց Օսին ամենից շատ ուրախացավ ճուտիկի համար: Նա փոքրիկ եղբորից վերցրեց ճուտիկն ու ասաց.

— Հիմա այս ճուտիկն իմը կլինի և ոչ մեկին չեմ տա:

Ծնողները մի քիչ զարմացան որդու այդօրինակ ցանկության վրա, սակայն չառարկեցին:

Նախաճաշի ժամանակ ճուտիկը նստել էր սեղանի մեջտեղը: Նա չափազանց ինքնավստահ էր և երկյուղի նշույլ անգամ չցուցաբերեց: Հավանաբար այն պարզ պատճառով, որ ինկուբատորում էր ծնվել: Թխսի ճտերը սովորաբար ավելի վախկոտ են լինում: Չէ՞ որ նրանք մայր ունեն, որը միշտ պատրաստ է իր ճտերին թևերի տակ թաքցնել: Եվ բան է, եթե որևէ վտանգ նկատի, իսկույն կսկսի կռթկոթալ՝ «Կռթկոթուր, կռթկոթուր: Ինձ մոտ եկեք, փոքրիկներս: Ես թույլ չեմ տա, որ ձեզ նեղացնեն: Իսկ ինկուբատորի ճտերը անհոգ են ու խիզախ: Եվ եթե մի դժբախտություն պատահի, հույսները միայն մարդկանց օգնության վրա կդնեն:

Ճուտիկը անհոգ երանությամբ ճեմում էր սեղանի վրա, հետաքրքրությամբ ուսումնասիրելով պնակներն ու գավաթները: Եվ քիչ հետո սկսեց իր նախաճաշը: Նա մի կաթիլ կաթ խմեց, մի փշուր թխվածք կտցեց և ամեն անգամ սիրալիր ծվծվում էր, երբ նրան առաջարկում էին համտես անել էլի ինչոր մի բան: Եվ ընդհանրապես, իրեն զգում էր ինչպես սեփական տանը:

Հետո բոլոր հինգ տղամարդն էլ գնացին իրենց գործին, իսկ մայրը ավագ որդու խնդրանքով ճուտիկին տարավ խոհանոց:

Դպրոցից տուն գալով՝ Օսին ճուտիկի ոտքից կարմիր ժապավեն կապեց, որպեսզի չշփոթի մյուսների հետ, ու տարավ հավանոց:

Երբ ճուտիկը մեծացավ ու հավ դարձավ, Օսին նրա անունը դրեց Լիզա: Ամբողջ ազատ ժամանակը նա իր սիրելիի հետ էր անցկացնում: Եվ ճուտիկը այնքան

էր ընտելացել Օսիին, որ առաջին իսկ կանչից սլանում էր նրա մոտ ու թույլ տալիս, որ Օսին իրեն ձեռքը վերցնի:

Օսին շատ հաճախ ճուտիկին տուն էր բերում, ուր նա իսկույն մտերմացավ Գիլկուշի ու կատվի հետ: Իսկ երբ Օսին նստում էր դասերը սովորելու, Լիզան բարձրանում էր նրա աթոռի թիկնակին ու նայում էր տետրին: Որոշ ժամանակ անց նա սովորեց թռչելնաստել իր տիրոջ ուսին, և նրանք այդպես գնում էին զբոսանքի: Այդ զբոսանքները Լիզային գերագույն հաճույք էին պատճառում, այնքան որ կապված էր Օսիին:

Բայց դեպքը, որի մասին խոսվում է, տեղի ունեցավ շատ ուշ:

Պետք է ասել, որ Օսին դպրոցում անվերջ ինչոր անախորժություններ էին պատահում: Մենք՝ աշակերտներս, այսինքն՝ դպրոցական բնակչության ճնշող մեծամասնությունը, Օսիին հրաշալի տղա էինք համարում և համոզված էինք, որ ուսուցիչները նրա նկատմամբ անարդարացի էին: Պարզապես նրանք Օսիին չէին ճանաչում այնպես, ինչպես մենք էինք ճանաչում: Նա հրաշալի ընկեր էր, ուրախ ու մարդամոտ: Եվ լավ էլ սովորում էր: Բայց . . . բայց նրա հետ համարյա ամեն օր մի որևէ դժբախտություն էր պատահում: Եվ մեծ մասամբ ոչ իր մեղքով:

— Դա նրանից է, — ասում էինք մենք, — որ Օսին հնարանքների վարպետ է: Իսկ որ գլխավորն է, սարսափելի անհաջողակ է:

Ամենամեծ փորձանքը մեր գլխին եկավ սովորական բարձիկի պատճառով, որով սրբում են գրատախտակը: Կարծում եմ, բոլորն էլ գիտեն, թե այդ բարձիկները որքան փոշոտ են լինում, եթե չոր են: Այսպես ուրեմն, մեզ մոտ սովորություն էր դարձել դասամիջոցներին փոքրիկ ճակատամարտ մղել: Միակ զենքը չարաբաստիկ բարձիկն էր: Եթե դրանով հաջողվեր ծեփել ընկերոջը, ուրեմն նա ոտից գլուխ կկորչեր կավճափոշու մեջ: Հանդիսականները այդ ժամանակ քրքջում էին, իսկ տուժվածը կատաղում էր և, իհարկե, փորձում էր հաշիվները մաքրել «թշնամու» հետ: Այդպես մենք զվարճանում էինք արդեն մոտ մի շաբաթ:

Այս ամենն ավարտվեց նրանով, որ մի քանի մայրիկներ եկան դպրոց ու բողոքեցին մեր դասղեկին: Իբրև թե իրենց երեխաները դպրոցից վերադառնում են այնքան կեղտոտ ու փնթի, որ նայելն անգամ սարսափելի է: Եվ մի թե, իբր, չի կարելի հետևել, որ գրատախտակը խոնավ բարձիկով մաքրվի:

Բողոքներն իրենցն արեցին, և մի գեղեցիկ օր ֆրաու Վիլսոնն այլևս չդիմացավ:

— Դուք պետք է վերջ տաք այդ հիմար զվարճալիքին, — ասաց նա: — Համա թե բան եք հորինել:

Մենք, իհարկե, համաձայնեցինք, որ մեզ վատ ենք պահել, և խոստացանք վերջ տալ «բարձիկներով ճակատամարտին»: Դասողեկը հանգստացավ: Նա գիտեր, որ եթե խոսք ենք տալիս, ուրեմն անպայման կկատարենք:

Դասարանից դուրս գալով՝ ֆրաու Վիլաուն չգիտես ինչու նայեց Օսին ու հարցրեց.

— Դե, իսկ դո՞ւ:

— Ես՝ ինչ, — սթափվեց Օսին:

— Դու հասկացա՞ր, որ ձեր անկարգությունները շատ հեռուն են գնացել:

— Այո, իհարկե, — փնթփնթաց Օսին, և մեզ թվաց, որ նա վիրավորվեց: Դե, նրա տեղը ով էլ լիներ՝ կվիրավորվեր: Ով՞ ով, բայց մենք հո գիտեինք, որ Օսին ընդհանրապես չի մասնակցել այդ հիմար զվարճանքին: Այ թե ձախորդն է, չգիտես ինչու ուսուցիչները ամեն ինչի պարագլուխը հատկապես նրան էին համարում:

Հաջորդ դասից առաջ Օսին մոտեցավ գրատախտակին, վերցրեց բարձիկն ու, թափահարելով, հայտարարեց.

— Վերջին ներկայացումը: Հրաժեշտի ներկայացում:

Նա բարձիկը ձեռքին սկսեց վազվզել շարքերի միջով և, ֆրաու Վիլաուի տնագն անելով, գոչեց.

— Ձեր անկարգությունները շատ հեռուն են գնացել: Բավական է երես առնեք:

Չգիտես ինչու, Աննին մտածեց, որ Օսին նշան է բռնել իրեն, ու փախուստի դիմեց: Նա վազեց մինչև դուռը: Օսին հասավ նրան, բայց Աննին ճչաց այնպես, ինչպես կարող են ճչալ միայն աղջիկները, դուրս ծլկեց և ամբողջ ուժով հենվեց դռանը: Այդ պահին միջանցքով անցնում էր մեր դիրեկտորը: Նա Աննին հարցրեց, թե ինչու է հենվել դռանը: Առանց պատասխանի սպասելու՝ դիրեկտորը մռայլվեց և սկսեց ականջ դնել դասարանից լսվող ժխորին: Իսկապես, դասարանում անասելի աղմուկ էր: Ոմանք պահանջում էին, որ Օսին բարձիկը տեղը դնի, մյուսներն՝ ընհակառակը, դրդում էին շարունակել «ներկայացումը»:

Մի պահ Օսին շփոթվեց: Բայց երբ բացվեց դուռը, նա գոչեց. «Հապա՛, մի անգամ էլ», — և բարձիկը զարկեց ուղիղ դիրեկտորի գլխին:

Սկզբում դիրեկտորը քարացավ, հետո մի կերպ մաքրեց դեմքն ու, առանց մի խոսք ասելու, հեռացավ:

Օսին անօգնական նայեց դիրեկտորի ետևից. նրա աչքերում սարսափ կար:

Գարշելի պատմություն ստացվեց, և չգիտեինք, ինչպես հարթեինք այն: Օսիի հետ գնացինք դիրեկտորից ու ֆրաու Վիլաուից ներողություն խնդրելու: Մենք երդվեցինք, որ ոչ մի նման բան այլևս չի կրկնվի: Բացի դրանից, Օսիի մայրիկին դպրոց կանչեցին, և դիրեկտորի առանձնասենյակում մոտ մեկ ժամ ձգվեց խոսակցությունը:

Մյուս օրն իմացանք, որ Օսիին դպրոցից չեն հեռացնում, ինչպես ենթադրել էինք սկզբում: Ամբողջ դասարանը թեթևացած շունչ քաշեց, որովհետև նման պատիժը չափից դուրս դաժան կլիներ: Չէ՞ որ Օսին բոլորովին էլ չէր ուզում «փոշեկոլով» անել դիրեկտորին:

— Նա ինձ էր նշան բռնել, — անդադար կրկնում էր Աննին ու Օսիին կարեկցելուց ձեռքերն էր կոտրատում:

Հաջորդ օրերին մեզ հեզ ու խոնարհ էինք պահում: Բոլորովին չէինք ուզում ֆրաու Վիլաուին նորից վշտացնել: Դա մե՛կ: Երկրորդ՝ մենք գիտեինք, որ եթե դասարանում էլի ինչոր բան կատարվեր, ամբողջ մեղքը մեր խեղճ Օսիի գլխին պիտի կոտրվեր:

Եվ, այնուամենայնիվ, հերթական անախորժությունը չուշացավ: Դա տեղի ունեցավ ծնողական ժողովի ժամանակ:

Այդ ժողովի մասին ֆրաու Վիլաուն մեզ զգուշացրեց մոտ մեկ ամիս առաջ, մի բան, որ նախկինում երբեք չէր արել: Սովորաբար ասում էր. «Հինգշաբթի օրը, յոթ անց երեսունին, ձեր ծնողները պետք է դպրոցում լինեն»: Եվ ուրիշ ոչինչ: Բայց այս անգամ խոսքը հաշվետու ժողովի մասին էր, ուր պետք է ի մի բերվեին տարեկան արդյունքները: Եվ բոլոր ծնողների ներկայությունը պարտադիր էր:

Մեր դասարանին հանձնարարված էր զարդարել դահլիճը: Բացի այդ, մեզ հանձնարարված էր նաև երեկոյի գեղարվեստական մասը, այսինքն՝ պետք է երգեինք ու արտասանեինք:

Դահլիճը զարդարելը, պարզվեց, այնքան էլ դժվար չէր: Ընտրեցինք տարվա ընթացքում նկարված լավագույն նկարներն ու կախեցինք պատերից: Իսկ մի քանիսը խոստացան ծաղկեփնջեր բերել: Եղբւնանու ծաղկելու ժամանակն էր: Որոշեցինք ամբողջ փնջեր բերել ոչ միայն գեղեցկության, այլև բուրմունքի համար:

Երգել նույնպես կարող էինք: Մաքս Կրակը արդեն իսկական դաշնակահար էր ու համաձայնեց նվագակցել: Իսկ Պետեր Մոնկեն ցանկություն հայտնեց երկարաշունչ մի ոտանավոր արտասանել:

Սակայն այդ ամենը մեզ քիչ էր թվում: Ուզում էինք հյուրերին այնպիսի մի բան հրամցնել, որ ամեն օր տեսնել չէին կարող: Սկսվեցին առաջարկությունները:

Ինչոր մեկի մտքով անցավ կենդանի բուրգ կառուցել: Մեզնից վեց ուժեղագույնները պիտի կանգնեն ցածում, իսկ մյուսները, ըստ քաշի ու հասակի, կբարձրանան նրանց ուսերին: Բուրգի զագաթին կկանգնեցնեն մի փոքրիկի, որը բարձրից կթափահարի դրոշակը:

Բայց այս խոստումնալից մտահղացումը մերժվեց, որովհետև մեր բեմը վարագույր չուներ: Իսկ առանց վարագույրի բուրգ կազմել չէինք համարձակվում:

Այդ ժամանակ Շտիպին հայտարարեց, որ կարող է ապշեցուցիչ աճապարություն անել: Մենք, իհարկե, ոգևորությունից աղմկեցինք, բայց պարզվեց, որ Շտիպին նորնոր մտադիր է տիրապետել այդ արվեստի գաղտնիքներին: Եվ նա մեզ ցույց տվեց թերթի հայտարարությունը:

«Տասնհինգ զարմանահրաշ ֆոկուս կարելի է սովորել ամենակարճ ժամանակում, ընդամենը հինգ մարկով: Դրամը ուղարկել վերադիր վճարով»... . .

Վճռելով, որ Շտիպիի մտադրությունից ոչինչ դուրս չի գա, հրաժարվեցինք նրանից:

Եվ այդտեղ խոսակցությանը խառնվեց Օսին ու հարցրեց. իսկ ի՞նչ կլինի, եթե ինքը Լիզա հավի հետ հանդես գա որպես վարժեցնող: Այդ միտքը մեր սրտովն էր, որովհետև Օսիից շատ էինք լսել նրա հավի բացառիկ ընդունակությունների մասին:

Իր ելույթը նա պատկերացնում էր այսպես. սկզբում Լիզան հրամանը լսելուն պես կթոչի իր ձախ ուսին, հետո՝ աջ, և նա բեմով մեկ պատվո շրջան կկատարի: Իսկ երբ հանդիսատեսները զարմանքից կքարանան, Օսին կկանգնի բեմի կենտրոնում ու, հավը գլխին, քաղաքավարությամբ կխոնարհվի:

— Իսկ եթե Լիզան չհնազանդվի՞ :

— Էդ էր պակաս, — ասաց Օսին: — Ես երևի մի հարյուր անգամ փորձել եմ այդ բաները: Նույնիսկ հեծանվով եմ զբոսնել: Նա նստում է ուսիս, իսկ ես սլանում եմ խանութ:

Դա մեզ համոզեց, բայց որոշեցինք առայժմ ոչինչ չասել ոչ ուսուցիչներին, ոչ աշակերտներին: Ուզում էինք, որ այդ համարը բոլորին ցնցի:

Միանգամայն պարզ էր, որ նախ պետք է համոզվեինք, որ համարը կհաջողվեր: Եվ ճաշից հետո գնացինք Օսիի մոտ: Նստոտելով տան ետևում փոված

մարգագետնում, սպասեցինք, մինչև Օսին կգնար հավին բերելու: Նա շուտ վերադարձավ: Իսկ ետևից փութկոտ շորորում էր Լիզան:

Պագելով, Օսին նրան հրամայեց՝ «Հո՛ւյ»: Եվ ի՛նչ էք կարծում: Լիզան ակնթարթորեն հայտնվեց նրա ուսին: Օսին ձգվեց ամբողջ հասակով, սակայն հավը նույնիսկ չշարժվեց: Հետո Օսին նորից կռացավ, և Լիզան թռավ գետին:

Օսին մի քանի անգամ իրար ետևից կրկնեց այդ համարը, և մենք արդեն չէինք կասկածում, որ երեկոյի ժամանակ ամեն ինչ կարգին կլինի:

— Իսկ ինձ կարելի՞ է փորձել, — հարցրեց Աննին:

Օսին ուսից իջեցրեց հավին ու մի կողմ գնաց: Լիզան անմիջապես վազեց նրա ետևից: Մենք հերթով ուսներս դեմ արեցինք նրան, բայց իզուր:

Այդ ժամանակ Օսին խնդրեցինք ցույց տալ, թե ինչպես է Լիզայի հետ զբոսնում հեծանվով: Արդյունքը բոլոր սպասումներից վեր էր: Մարգագետնում Օսին զարմանալի պտույտներ էր կատարում, իսկ Լիզան այնպես էր նստել նրա ուսին, ասես կպել էր ու պոկ չէր գալիս:

Վերջում Օսին հավին նստեցրեց գլխին ու խոնարհվեց: Լիզան չշարժվեց անգամ:

— Սա ոչ թե հավ է, այլ հրաշք, — ոգևորված բացականչեց Աննին, և մենք սիրով համաձայնեցինք:

— Ելույթից առաջ ես նրա վզին երկնագույն գեղեցիկ ժապավեն կկապեմ, — ավելացրեց Աննին, և Օսին չառարկեց:

Դպրոցում հայտնեցինք, որ Օսին ծնողական երեկոյի ժամանակ չտեսնված մի բան պիտի ցուցադրի: Սակայն մանրամասնությունները որոշեցինք գաղտնի պահել:

Մեր դասղեկը մտքերի մեջ ընկավ:

— Օսի՞ն, — ճակատը կնճռոտելով՝ հարցրեց նա: — Իսկ որևէ օյին չի սարքի՞:

Բայց մենք պատասխանեցինք ք, որ խոսքը արվեստի մասին է, և որ ինքը միանգամայն հանգիստ կարող է լինել:

— Դե լավ, — տեղի տվեց ֆրաու Վիլաուն: — Կապրենք՝ կտեսնենք:

Սակայն Օսին երեկույթից անմիջապես առաջ սկսեց տատանվել:

— Բա որ հանկարծ Լիզան այդ բազմությունից վախենա՞, — ասաց նա: — Ախր դրան սովոր չէ: Բացի դրանից, հանդիսատեսները, հավանաբար, կաղմկեն, կփռշտան, կծիծաղեն:

— Եվ կհագան էլ, — նկատեց Կարլը:

Այնժամ մենք որոշեցինք մի վերջնական փորձ անել, որպեսզի ամեն ինչ լիներ ինչպես պետքն է: Փորձի ժամանակ բարձր ծիծաղում էինք, փռշտում, հագում, բայց Լիզան մեզ վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում և հանգիստ նստած էր Օսիի ուսին:

Մենք գոհ մնացինք. հիմա արդեն ոչ մի պատահականություն չի կարող Լիզային հունից հանել:

— Գուցե ելույթից հետո ուսուցիչները սկսեն մի քիչ լավ աչքով նայել ինձ, — հույսով ասաց Օսին: Մենք գլխով արեցինք, որովհետև ինքներս էլ այդ հույսն ունեինք:

— Իսկ վերջում, երեխաներ, — ամբողջապես փայլելով հայտարարեց Օսին, — վերջում ես հեծանվով կանցնեմ դահլիճի միջով:

Նա հիասթափվեց, երբ մենք հակառակվեցինք:

— Առաջին անգամ Լիզայից չի կարելի այդքան շատ բան պահանջել, — ասաց Կարլը:

Եվ Օսին ստիպված էր համաձայնել:

Ծնողները խումբխումբ բարձրանում էին դեպի դահլիճ տանող աստիճաններով: Մենք նախօրոք «Դեպի ժողով» մակագրությամբ ու սլաքներով ցուցանակներ էինք փակցրել ամենուրեք:

Հայրիկներն ու մայրիկները շրջում էին դահլիճում ու հիանում մեր նկարներով: Երբ բոլորը հավաքվեցին, բեմ ելավ Ֆրաու Վիլաուն և ողջույնի ճառ արտասանեց: Մեր ուսուցչուհին տոնական զգեստով էր և սանրվածքն էլ արտասովոր էր: Եվ անգամ ձայնն էլ հնչում էր ոչ այնպես, ինչպես դասերի ժամանակ: Հավանաբար, նա մի քիչ հուզված էր:

Ֆրաու Վիլաունից հետո ողջույնի խոսք ասաց մեր աղջիկներից մեկը, որից հետո մենք խմբով երգեցինք:

Մի խոսքով, ամեն ինչ բարեհաջող էր ընթանում: Հանդիսատեսները լուրջ և ուշադիր լսում էին: Այդ միջոցին Օսին տանջվում էր վարագույրի ետևում, բեմի



կողքին դրված աթոռակի վրա: Նա ծնկներին էր դրել բռնակով մի զամբյուղ: Ինչպես կռահեցինք, զամբյուղի մեջ նստած էր Լիզան: Աննին նրա վզին երկնագույն մեծ ժապավեն էր կապել, և Օսին հետագայում մեզ պատմեց, որ մեր երգը լսելուն պես Լիզան սկսել է անհանգստության նշաններ ցույց տալ: Զամբյուղի կափարիչը բարձրացնելով՝ Օսին տեսնում է, որ հավը կտցահարում է ժապավենը, ցանկանալով ազատվել դրանից:

Վերջապես հասավ Օսիի հերթը: Մեր լավագույն նկարիչները գեղեցիկ պլակատ էին պատրաստել, ուր պատկերված էր Լիզան՝ երկնագույն ժապավենը վզին, իսկ տակը հետևյալ մակագրությունը. «Խնդրում ենք բացարձակ լռություն պահպանել Լիզայի անդրանիկ ելույթի ժամանակ»: Այդ պլակատը ձեռքին՝ Կարլը մի քանի անգամ ետուառաջ արեց բեմի վրա:

Եվ ահա, վարագույրի ետևից հայտնվեց Օսին՝ զամբյուղը ձեռքին: Մենք սովոր էինք նրան տեսնել դպրոցական համազգեստով: Իսկ այսօր Օսիի հագին նոփնոր մուգ կապույտ կոստյում էր ու ձյունաթույր վերնաշապիկ, որի օձիքը զարդարում էր թիթեռնիկփողկապը: Մազերը խնամքով սանրված էին: Եվ ընդհանրապես, նա մի քիչ ծիծաղելի տեսք ուներ:

Կանգնելով բեմի մեջտեղում՝ Օսին գլուխ տվեց հասարակությանը: Ինչոր տեղից զսպված քրքիջի ձայն լսվեց: Մենք սսկացրինք նրանց ու գոռացինք՝ «Լռեք»:

Դիրեկտորը հարցական նայեց ֆրաու Վիլսոնին: Վերջինս գլխով արեց, իբր թե՝ անհոգ եղեք, ամեն ինչ իր կարգով է գնում: Մակայն դիրեկտորը կարծես համոզված չէր դրանում, որովհետև նրա դեմքին թեթևակի սարսափ երևաց:

Օսին բացեց զամբյուղի կափարիչը, Լիզային հանեց ու դրեց հատակին:

Վերջին նստարաններին նստած հանդիսատեսները վզները երկարացրին, հետո տեղներից վեր կացան, որպեսզի ավելի լավ տեսնեն Լիզային ու ոչինչ բաց չթողնեն:

Այդ ընթացքում նրանք սարսափելի աղմուկ բարձրացրին աթոռները ետ հրելով:

Լիզան տագնապած շուրջը նայեց: Մեզ թվաց, թե նույնիսկ փոքրացավ: Նա կրկին սկսեց կտցահարել իր ժապավենը, բայց Օսին ինչոր բան շշնջաց, և նա դադարեցրեց իր փորձերը:

Երբ դահլիճում լռություն տիրեց, Օսին չոքեց ու հրամայեց.

— Լիզա, հո՛ւ պ: Լիզա, հո՛ւ պ:

Բայց նա այս բառերն արտասանեց մի տեսակ խուլ ձայնով, և մենք վախեցանք, որ Լիզան չի հասկանա հրամանը: Այդպես էլ եղավ: Լիզան ոչ միայն չթռավ Օսիի ուսին, այլև ավելի կծկվեց: Այդ պահին մի քանի աշակերտներ նորից ծիծաղեցին:

— Լռե՛ք, — արդեն անհանգստանալով՝ գոռացինք մենք:

Օսին մի քանի անգամ ծնկի իջավ Լիզայի առաջ, բայց սա բոլորովին էլ միտք չունեի մեղքը քավել: Խղճուկ ու սարսափած՝ նա նստել էր հատակին: Խեղճ Օսիի ճակատից քրտինքը թափվում էր հեղեղի պես:

Դահլիճում ավելի բարձր սկսեցին ծիծաղել: Այդ ժամանակ բեմ ելավ Կարլն ու ասաց.

— Արտիստին բացարձակ լռություն է պետք:

Հավանաբար, հուզմունքից Կարլի կոկորդը չորացավ, և նրա ձայնը հնչեց ջահել աքլորի պես: Այստեղ արդեն ծիծաղեցին նույնիսկ ծնողները: Նրանցից շատերը, երևի, կարծում էին, որ այս ամենը՝ և՛ դահլիճի հռիռոցը, և՛ Կարլի կոչերը, ներկայացման ծրագրով են նախատեսված: Չէ՞ որ հանդիսատեսները գաղափար չունեին, թե ինչ սպասելիքներ ունի Օսին իր հավից:

Ճակատի քրտինքը սրբելով՝ Օսին ձեռնարկեց իր վերջին հուսահատ փորձը: Նրա դեմքը վերնաշապիկից էլ սպիտակ էր:

— Լի՛զա, — գոչեց նա: — Լիզա, հո՛ւպ:

Սակայն հավը կշկչալով փախավ մի կողմ:

— Կարծես թե ֆոկուսդ չստացվեց, — ասաց դիրեկտորը: — Հավդ վերցրու ու հեռացիր:

Օսին խոնարհ գլուխ տվեց: Բայց երբ նա մոտեցավ Լիզային ու ձեռք մեկնեց, հավը թռավ տեղից ու հայտնվեց նրա ուսին:

Օսին իրեն կորցրեց: Նա աչքի պոչով նայեց Լիզային ու թեթևակի ժպտաց, չիմանալով, թե ինչ անի: Այն հանդիսատեսները, որոնք խղճում էին Օսիին, շատ ուրախացան. ինչ որ է, ֆոկուսը վերջապես հաջողվեց: Թնդացին ծափահարությունները: Այ, հենց այդ ծափահարություններն էլ հասցրին աղետի, որովհետև Լիզայի փորձերի ժամանակ մենք չէինք ծափահարում:

Սարսափահար Լիզան թռավ Օսիի ուսից ու սկսեց բեմով մեկ այս ու այն կողմ նետվել: Օսին ընկավ նրա ետևից՝ ջանալով մի անկյուն քշել նրան: Օսիին օգնության

հասան մի քանի ծնողներ, և կատարյալ իրարանցում սկսվեց. . . Լիզան թռավ դաշնամուրի վրա, լաքապատ կափարիչին զույգ ճանկովածք թողնելով: Դաշնամուրի վրա շուռումուռ գալով՝ նետվեց դեպի դիրեկտորը, բայց թռիչքի ընթացքում, հավանաբար, մտադրությունը փոխեց ու վայրէջք կատարեց ինչոր մեկի մայրիկի ուսին: Մայրիկը սարսափելի ճիչ բարձրացրեց: Վերջնականապես շշկված Լիզան հավաքեց իր վերջին ուժերն ու. . . վեր խոյացավ դեպի ջահը: Նստելով մետաղյա օղակին, հավը իրեն լիակատար անվտանգության մեջ զգաց ու մի քիչ հանգստացավ:

Երբ բոլորը գլխի ընկան, թե ինչ է կատարվել, դիրեկտորը տնտեսվարին կարգադրեց բերել սանդուղքը: Բայց Օսին հուսահատ օրորեց գլուխն ու ասաց, որ դրանից ոչինչ դուրս չի գա: Ավելի լավ է Լիզային հանգիստ թողնեն ու շարունակեն համերգը:

Հանդիսատեսները կրկին զբաղեցրին իրենց տեղերը, շարունակ նայելով ջահի կողմը:

Բեմ էլավ Ինգրիդն ու սկսեց բանաստեղծություն արտասանել: Նա միշտ էլ լավ էր արտասանում, իսկ այսօր հատկապես կաշվից դուրս էր գալիս, որպեսզի մի կերպ հարթեցնի Օսիի անհաջողության տպավորությունն ու փրկի դասարանի պատիվը: Բայց երբ Ինգրիդը հասավ երկրորդ քառյակին, Լիզան հանկարծ սկսեց կշկշալ: Ինգրիդը շփոթված լռեց, հայացքը հատակին հառելով, իսկ բոլոր հանդիսատեսները աչքները տնկեցին հավին: Վերջապես Լիզան դադարեց կշկշալուց, սակայն երբ Ինգրիդը բերանը բացեց, նորից սկսվեց ուժեղ կշկշոցը: Այստեղ արդեն Ինգրիդը իրեն չգսպեց ու ծիծաղեց: Նրան հետևեց ամբողջ դահլիճը: Միայն Օսիի ծիծաղը չէր գալիս: Մենք տեսանք, թե ինչպես թաքուն օձիքից պոկեց «թիթեռնիկն» ու դրեց գրպանը: Նա վշտահար տեսք ուներ:

Թե հետո ժողովում ինչի մասին խոսեցին, մեզնից ոչ ոք հետագայում հիշել չէր կարողանում: Ե՛վ ծնողները, և՛ ուսուցիչները իրենց ելույթներում անվերջ շփոթվում էին և ասում էին, հավանաբար, բոլորովին էլ ոչ այն, ինչ ուզում էին ասել:

Իսկ Լիզան, ասես ոչինչ էլ չի եղել, զբոսնում էր ջահի օղակի վրա, մերթ ընդ մերթ իր կշկշոցը տարածելով: Այն ծնողները, որոնց աթոռները ուղիղ ջահի տակ էին դրված, մի կողմ քաշվեցին, զգուշանալով, որ Լիզան հանկարծ վերնից անակնկալ չմատուցի:

Վերջապես ֆրաու Վիլաուն ասաց եզրափակիչ խոսքը: Բոլոր ծնողները երեկոյից գոհ մնացին, միայն դիրեկտորը մռայլ տեսք ուներ:

Իսկ մենք միայն մի բան էինք մտածում. մեր լավ Օսին կրկին տհաճ պատմության մեջ ընկավ: Երևում էր, որ ֆրաու Վիլաուն կիսում էր մեր զգացմունքները, որովհետև աննկատելի գլխով արեց նախ մեզ, հետո՝ Օսիին:

Ժողովն ավարտվեց: Բայց հանկարծ Օսին արագ բեմ վազեց ու ասաց.

— Տիկնայք և պարոնայք: Շատ եմ խնդրում միջանցք դուրս գաք, այդ դեպքում միայն ինձ կհաջողվի համոզել Լիզային. . .

Նրա հետագա խոսքերը խլացան ուրախ քրքիջի մեջ:

Մենք վերջինը հեռացանք դահլիճից, անվերջ Օսին էինք նայում: Նա բոլորովին հանգիստ էր թվում:

Կարծում էինք, թե բոլորն արդեն ցրված կլինեն տները, և շատ զարմացանք, տեսնելով, որ և՛ աշակերտները, և՛ ծնողները համբերությամբ սպասում էին Օսին: Խմբերի բաժանված՝ նրանք կանգնած էին բոլոր ազատ տեղերում: Խոսակցությունը հիմնականում հավերի բազմացման և այն մասին էր, որ թոշուններն ընդհանրապես շատ դյուրահավատ են:

Աննին թաքուն մոտեցավ դահլիճի դռանն ու բանալու անցքից նայեց, բայց ոչինչ տեսնել չկարողացավ: Հինգ բոպե անց դուռը կամաց բացվեց ու զամբյուղը ձեռքին, դահլիճից դուրս եկավ Օսին: Բաճկոնի կոճակներն արձակված էին, մազերը զզգզված, բայց դրա փոխարեն նրա գլխին թառել էր Լիզան:

Որպեսզի հավին չվախեցնենք, մենք ոչ մի ձայն չհանեցինք: Ե՛վ միջանցքում, և՛ աստիճաններին մեռելային լռություն էր:

Օսին կրկին վերադարձավ դահլիճ, որովհետև մոռացել էր լույսը մարել: Լսվեց երեք ճրթոց, ու դահլիճը մթնեց:

Գլուխը բարձր պահած, Օսին հանդիսավոր քայլերով անցավ մեր կողքից ու աստիճաններով ցած իջավ: Երբ նա բակ դուրս եկավ, բոլորս նետվեցինք պատուհանների մոտ: Լիզան դեռ նստած էր Օսիի գլխին, իսկ բակի երկայնքով շարվել էին ապշահար ծնողները. . .

Ահա, ըստ էության, ողջ պատմությունը Օսիի ու նրա Լիզա հավի մասին: Հարկ է նաև նշել, որ դիրեկտորից հանդիմանանքի ոչ մի խոսք չլսեցինք, իսկ ֆրաու Վիլաուն հաջորդ օրը Օսին գրատախտակի մոտ կանչեց, և նա փայլուն կերպով լուծեց խնդիրը:

— Գերազանց, Օսի, — ասաց ուսուցչուհին ու նշանակեց դասամատյանում:

Իսկ մի քանի օր անց տեղական լրագրում երևաց ոչ մեծ մի հոդված՝ «Անմոռանալի երեկո» վերնագրով: Այստեղ բոլոր ծնողների անունից ասված էր, որ երեկոյի ամենահրաշալի, ամենաուրախ իրադարձությունը Օսիի ու նրա վարժեցրած հավի ելույթն էր:

